“Թեղուտ” ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

"Թեղուտ" ՓԲԸ
Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել "Թեղուտ" ՓԲԸ-ի (այսուհետ՝ "Ընկերություն") կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի համապատասխան պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31 դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Էնդրյու Քոքսշել
Տնօրեն
KPMG Armenia ՓԲԸ

Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

"Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա" ՓԲԸ
21 հունիսի 2012թ.

հազ. դրամ	Ծնթգ.	2011թ.	2010թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	27,054,095	11,749,712
Ոչ նյութական ակտիվներ	8	118,388	81,611
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	9	11,659,240	5,519,989
Փոխհատուցելի ԱԱՀ		3,298,663	1,301,744
Ոչ ընթացիկ ակտիվներ		**42,130,386**	**18,653,056**
Պաշարներ	11	432,663	315,291
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		76,122	45,137
Կանխավճարներ		199,658	34,575
Կանխավճարված ֆինանսական ծախսեր		154,130	151,030
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		14,165	4,165
Ընթացիկ ակտիվներ		**876,738**	**550,198**
Ընդամենը ակտիվներ		**43,007,124**	**19,203,254**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	12	3,100,100	3,100,100
Լրացուցիչ կապիտալ	13	12,998,662	-
Կուտակված վնաս		(113,495)	(202,815)
Ընդամենը սեփական կապիտալ		**15,985,267**	**2,897,285**
Պարտավորություններ			
Վճարվելիք ԱԱՀ		1,595,789	-
Հետաձգված հարկային պարտավորություն	10	3,051,265	-
Վարկեր և փոխառություններ	13	21,313,670	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**25,960,724**	-
Վարկեր և փոխառություններ	13	255,018	15,918,123
Պահուստներ	14	89,423	33,738
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	15	623,571	237,643
Վճարվելիք այլ հարկեր		93,121	116,465
Ընթացիկ պարտավորություններ		**1,061,133**	**16,305,969**
Ընդամենը պարտավորություններ		**27,021,857**	**16,305,969**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**43,007,124**	**19,203,254**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 44-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ծնթգ.	2011թ.	2010թ.
Շարունակվող գործունեություն			
Այլ եկամուտ		36,506	14,099
Վարչական ծախսեր		(147,138)	(75,515)
Այլ ծախսեր		(39,896)	(28,268)
Գործառնական գործունեության արդյունքները		**(150,528)**	**(85,684)**
Զուտ ֆինանսական եկամուտ/ (ծախս)		2,364	(3,214)
Վնաս մինչև շահութահարկով հարկումը		**(148,164)**	**(88,898)**
Շահութահարկի գծով օգուտ	6	237,484	-
Շահույթ/(վնաս) և ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար		**89,320**	**(88,898)**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2012թ. հունիսի 21-ին և վերջինիս անունից ստորագրվել են:

Վալերի Մեջլումյան
Գլխավոր տնօրեն

Մկրտիչ Պետրոսյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 44-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	3,100,100	-	(113,917)	2,986,183
Ընդամենը համապարփակ վնասը տարվա համար				
Վնասը և ընդամենը համապարփակ վնասը տարվա համար	-	-	(88,898)	(88,898)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	**3,100,100**	**-**	**(202,815)**	**2,897,285**
Ընդամենը համապարփակ եկամուտը տարվա համար				
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	89,320	89,320
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ				
Լրացուցիչ կապիտալ առաջացած մայր կազմակերպությունից շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված փոխառության արդյունքում՝ առանց 3,288,749 հազար դրամ գումարով հետաձգված հարկի	-	12,998,662	-	12,998,662
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	**3,100,100**	**12,998,662**	**(113,495)**	**15,985,267**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 44-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2011թ.	2010թ.
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	126,010	77,951
Մատակարարներին և աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(233,410)	(96,819)
Վճարված ԱԱՀ	(401,130)	(626,773)
Վճարված այլ հարկեր	(23,377)	(3,786)
Գործառնական գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	**(531,907)**	**(649,427)**
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	36,480	26,605
Հիմնական միջոցների ձեռքբերում և կառուցում	(19,041,540)	(7,943,676)
Ներդրումային գործունեությամբ օգտագործվածդրամական միջոցների հոսքեր	**(19,005,060)**	**(7,917,071)**
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Մուտքեր փոխառություններից	21,621,827	9,452,020
Վճարված տոկոսներ	(2,074,860)	(887,999)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	**19,546,967**	**8,564,021**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	10,000	(2,477)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	4,165	6,642
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,165**	**4,165**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 44-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1. Ներածություն

(ա) Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

“Թեղուտ” ՓԲԸ-ն (“Ընկերություն”) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է 2006թ. մայիսին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փ. 19:

Ընկերության նախատեսված ապագա հիմնական գործունեությունն է հանդիսանում պղինձ-մոլիբդենային հանքաքարի արդյունահանումը, դրա վերամշակման միջոցով պղնձի ու մոլիբդենի խտանյութերի արտադրությունն ու իրացումը: Ընկերությունն ունի Հայաստանի հյուսիսում գտնվող Թեղուտի պղինձ- մոլիբդենային հանքավայրի շահագործման լիցենզիա (տես ծանոթագրություն 17 (բ)): Ներկայումս Ընկերությունը ներգրավված է հանքարդյունաբերական գույքի զարգացման և հանքի տարածքում հարստացուցիչ գործարանի կառուցման աշխատանքներում:

Հիմնադրման պահից Ընկերությունն ամբողջովին պատկանում էր “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲԸ-ին:

2011թ. նոյեմբերին “Թեղուտ” ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը փոխանցվեց վերջնական մայր կազմակերպության դուստր կազմակերպությանը՝ “Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթեդ”-ին (մայր կազմակերպություն):

Ընկերության վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վալերի Մեջլումյանը, ով իրավասու է կառավարել Ընկերության գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մասնակցություններ ունի Ընկերությանը չպատկանող այլ ընկերություններում: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է ("դրամ"), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված է այլ տեղեկատվություն:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 2(դ) – հանքաքարի պաշարներ
- Ծանոթագրություն 13 – վերջնական մայր կազմակերպությունից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի իրական արժեք

(ե) Հանքաքարի պաշարներ

Թեղուտի հանքավայրի հանքաքարի առաջին գնահատումը կատարել է ԽՍՀՄ Պաշարների պետական կոմիտեն 1991թ-ին: Կոմիտեի գնահատմամբ հանքաքարի պաշարները կազմում էին շուրջ 454 միլիոն տոննա, որում պղնձի միջին պարունակությունը կազմում էր 0.35%, իսկ մոլիբդենի միջին պարունակությունը՝ 0.022%:

Հանքավայրի հանքաքարի ընդհանուր պաշարների մոտ 35%-ի գնահատումները վերագնահատվել են և հանքավայրի շահագործման առաջին փուլի պլանը մշակվել է 2011թ-ի կեսին՝ Strathcona Mineral Services Limited կողմից, օգտակար հանածոների գնահատման և հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն, որի արդյունքներն հետևյալն են (միլիոն տոննայով)՝ 103.5 - չափված (measured), 31.9 - ենթադրվող (indicated), 27.5 - նախնական գնահատված (inferred): Գնահատման և շահագործման պլանի առաջին փուլը ենթադրում է 95.4 մլն. տոննա հանքաքարի արդյունահանում մինչև 2027թ., որում պղնձի միջին պարունակությունը կկազմի 0.34%, և մոլիբդենի միջին պարունակությունը՝ 0.010%: Հանքաքարի մնացած պաշարների համար պետք է մշակվեն գնահատման և շահագործման պլաններ, երբ շահագործման առաջին փուլը մոտենա իր ավարտին:

Հանքաքարի պաշարների քանակությունները գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ, ներառյալ Ընկերության վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքաքարի պաշարների գնահատումները հիմնված են հորատանցքերի և այլ հանքանցքերի հանքաքարի նմուշներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Ի լրումն, որոշակի մետաղի շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ հանքայնացման ցածր աստիճան ունեցող հանքաքարի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքավայրի հետագա շահագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսերի փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ հանքաքարի պաշարների՝ Ընկերության գնահատումների վրա:

Ընկերությունը կիրառում է վերը նշված գնահատումները հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկումն ու օգտակար ծառայության ժամկետները գնահատելու համար:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

(ա) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթների գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի ու արտարժույթով արտահայտված և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

(բ) Ֆինանսական գործիքներ

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները ներառում են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ընկերությունը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները դասակարգում է վարկերի և դեբիտորական պարտքերի դասում:

Ընկերությունը վարկերը և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Վարկեր և դեբիտորական պարտքեր դասակարգը ներառում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերը (ծանոթագրություն 13) և դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և ցպահանջ ավանդները:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասակարգում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

(iii) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

(գ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով "Այլ եկամուտներ/այլ ծախսեր" հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Հանքարդյունաբերական գույք

Հանքարդյունաբերական գույքը ներկայացվում է որպես հիմնական միջոցների առանձին դաս: Հանքարդյունաբերական գույքի սկզբնական արժեքն իրենից ներկայացնում է հանքավայրի տարածքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները և ներառում է հետազոտման, տեղանքի վերականգնման, մակաբացման և հանքաքարի արդյունահանման նախապատրաստման աշխատանքների գծով ծախսումները:

(iv) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- արտադրական սարքավորումներ 5 - 10 տարի
- շենքեր և կառույցներ 20 - 50 տարի
- փոխադրամիջոցներ 5 - 10 տարի
- այլ 5 - 10 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

(դ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Ճանաչում և չափում

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Ընկերության ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ այլ փոխարինող գումարի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- լիցենզիաներ — լիցենզիայի գործողության ժամկետ
- այլ ոչ նյութական ակտիվներ — 5-10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ե) Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն: Սկզբնական ճանաչման պահին վարձակալված ակտիվները չափվում են իրական արժեքից և վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարների ներկա արժեքից նվազագույնի չափով: Սկզբնական ճանաչումից հետո վարձակալված ակտիվը հաշվառվում է նշված ակտիվի նկատմամբ կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Վարձակալության մյուս տեսակները հանդիսանում են գործառնական վարձակալություն, և այդ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(զ) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է "առաջին մուտք, առաջին ելք" սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(է) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, կազմակերպության փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները, տնտեսական պայմանները, որոնք կապված են ստանձնած պարտականությունների չկատարման հետ:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Ընկերությունը վարկերը և դեբիտորական պարտքերը դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի

ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով վարկերը և դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են՝ հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասը ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում՝ վարկերի և դեբիտորական պարտքերի դիմաց: Ընկերությունը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցման, ապա արժեզրկման գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Կորպորատիվ ակտիվները բաշխվում են դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական հիմունքով և ստուգվում են արժեզրկման տեսանկյունից՝ որպես այն դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգման մաս, որին բաշխվում է տվյալ կորպորատիվ ակտիվը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները նվազեցնում են դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ը) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

(i) Կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխման պլաններ, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(թ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(i) Տեղանքի վերականգնում

Ընկերության բնապահպանության քաղաքականության և կիրառելի օրենսդրական պահանջների համաձայն, տեղանքի վերականգնման ու ծառատունկի գծով ճանաչվում է պահուստ հանքավայրի բաց եղանակով շահագործման, հանքաքարի թափոնների կուտակման, ենթակառուցվածքների և հանքի տարածքում պոչամբարի ու գործարանի կառուցման հետ կապված: Համապատասխան ակտիվը ճանաչվում է հիմնական միջոցներում:

Տեղանքի վերականգնման ապագա գնահատված ծախսերը վերանայվում են տարեկան կտրվածքով և փոփոխվում են ըստ անհրաժեշտության: Ապագա գնահատված ծախսերի, վերականգնման ժամկետների կամ կիրառվող զեղչի դրույքի փոփոխություններն ավելացվում կամ նվազեցվում են համապատասխան ակտիվի սկզբնական արժեքից:

(ժ) Հասույթ

(i) Վաճառված ապրանքներ

Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը, և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե գոյություն ունի հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել, ապա զեղչը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

(ii) Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի չափով: Գործարքի ավարտման աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքի ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

(հ) Այլ ծախսեր

(i) Վարձակալության գծով վճարներ

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսիչ գումարները ճանաչվում են որպես վարձակալության գծով կատարած ընդհանուր վճարների բաղկացուցիչ մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(կ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, պահուստների գծով զեղչի վերականգնումը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները (բացառությամբ առևտրական դեբիտորական պարտքերը):

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե արտարժույթի փոխարժեքային տարբերությունների շարժը զուտ օգուտ է, թե զուտ վնաս:

(խ) Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորումներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված՝ այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում, և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Ընկերության գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 9 *"Ֆինանսական գործիքներ"* ստանդարտը կգործի 2015թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կիրապարակվի մի քանի փուլերով, և կփոխարինի ՀՀՄՍ 39 *"Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում"* ստանդարտը: ՖՀՄՍ 9-ի առաջին մասը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների դասակարգմանը և չափմանը,

հրապարակվեց 2009թ. նոյեմբերին: Երկրորդ մասը, որը վերաբերում է ֆինանսական պարտավորությունների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2010թ. հոկտեմբերին: Ակնկալվում է, որ ստանդարտի մնացած մասերը կհրապարակվեն 2012թ. ընթացքում: Ընկերությունն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց: Ընկերությունը մտադիր չէ ընդունել այս ստանդարտը նախատեսվածից շուտ:

- ՖՀՄՍ 13 *"Իրական արժեքի չափում"* ստանդարտը կգործի 2013թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը փոխարինում է առանձին ՖՀՄՍ-ներում ընդգրկված իրական արժեքի չափման ուղեցույցները և իրենից ներկայացնում է իրական արժեքի չափման մեկ ընդհանուր ուղեցույց: Այն տրամադրում է իրական արժեքի վերանայված սահմանումը, սահմանում է իրական արժեքի չափման հիմունքները և ներկայացնում է իրական արժեքի չափման համար պահանջվող բացահայտումները: ՖՀՄՍ 13 չի ներկայացնում նոր պահանջներ ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի չափման համար և չի վերացնում գործնականում կիրառվող իրական արժեքի չափմանը վերաբերող բացառությունները, որոնք ներկայումս գոյություն ունեն որոշ ստանդարտներում: Ստանդարտը կիրառվում է հեռանկարային հիմունքով, և թույլատրվում է դրա ժամանակից շուտ կիրառումը: Համադրելի տեղեկատվության բացահայտում չի պահանջվում սկզբնական կիրառմանը նախորդող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռևս չի վերլուծել այս նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

- Բազմաթիվ *"ՖՀՄՍ-ների կատարելագործումները"* դիտարկվել են առանձին՝ յուրաքանչյուր ստանդարտի հիմունքով: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, ուժի մեջ կմտնեն 2011թ. հունվարի 1-ից ոչ շուտ: Ընկերությունը չի գտնում, որ փոփոխություններն էական ազդեցություն կունենան իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

5. Իրական արժեքի որոշում

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(ա) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակների համար:

(բ) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Իրական արժեքը, որը որոշվում է բացահայտման նպատակների համար, հաշվարկվում է՝ հիմք ընդունելով մայր գումարի և տոկոսագումարների գծով դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքը՝ զեղչված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով:

6. Շահութահարկի գծով ծախս

Ընկերությունը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով:

հազ. դրամ	**2011թ.**	**2010թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	-	-
	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(122,329)	28,013
Նախկինում չճանաչված հարկային վնասների ճանաչում	(115,155)	(28,013)
Ընդամենը շահութահարկի գծով արտոնություն	**(237,484)**	-

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2011թ.		**2010թ.**	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Վնաս մինչև շահութահարկով հարկումը	(148,164)		(88,898)	
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	(29,633)	20	(17,780)	20
Չնվազեցվող ծախսեր	15,156	(10)	8,313	(9)
Կանխավճարների գծով արտարժութային տարբերություններ Ընկերության հարկային հաշվառման մեջ	(107,852)	73	37,480	(42)
Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների փոփոխություն	(115,155)	78	(37,480)	42
Ընթացիկ տարվա վնաս, որի գծով հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել	-	-	9,467	(11)
	(237,484)	**160%**	**-**	**-**

7. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Արտադրական սարքավո-րումներ	Հող և շենքեր	Փոխադրա-միջոցներ	Այլ	Հանքարդյու-նաբերական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	2,635,849	2,700,041	176,689	150,135	-	5,662,714
Ավելացումներ	2,257,692	3,852,087	18,103	223,195	274,569	6,625,646
Օտարումներ	(25,895)	(25,942)	-	(2,759)	-	(54,596)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	4,867,646	6,526,186	194,792	370,571	274,569	12,233,764
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	4,867,646	6,526,186	194,792	370,571	274,569	12,233,764
Ավելացումներ	9,653,439	5,146,169	13,936	185,521	963,682	15,962,747
Օտարումներ	(13,307)	(6,633)	-	(796)	-	(20,736)
Մնացորդը առ 31 ռենտեմբեռի 2011թ.	**14,507,778**	**11,665,722**	**208,728**	**555,296**	**1,238,251**	**28,175,775**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	154,055	5,209	19,924	19,330	-	198,518
Տարվա մաշվածությունը	220,805	5,828	15,612	45,549	-	287,794
Օտարումներ	(1,349)	(11)	-	(900)	-	(2,260)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	373,511	11,026	35,536	63,979	-	484,052
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	373,511	11,026	35,536	63,979	-	484,052
Տարվա մաշվածությունը	464,780	76,159	16,879	81,034	-	638,852
Օտարումներ	(1,045)	(57)	-	(122)	-	(1,224)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	**837,246**	**87,128**	**52,415**	**144,891**	**-**	**1,121,680**
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2010թ.	2,481,794	2,694,832	156,765	130,805	-	5,464,196
Առ 31 դեկտեմբերի	4,494,135	6,515,160	159,256	306,592	274,569	11,749,712
Առ 31 դեկտեմբերի	**13,670,53208**	**11,578,594**	**156,313**	**410,405**	**1,238,251**	**27,054,095**

2011թ-ին Ընկերության կողմից փոխառությունների գծով 2,407,733 հազար դրամ գումարով կրած բոլոր ծախսերը ներառվել են հիմնական միջոցների ավելացումների կազմում (2010թ-ին՝ 930,282 հազար դրամ): 629,750 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը կապիտալացվել է հիմնական միջոցներին 2011թ-ին (2010թ-ին՝ 287,794 հազար դրամ):

Ընկերությունը գրավադրել է 3,753,006 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հողատարածքը և շենքերը և 12,143,450 հազար դրամ հաշվեկշռային արժեքով արտադրական սարքավորումները վարկային գծի դիմաց (ծանոթագրություն 13):

8. Ոչ նյութական ակտիվներ

2007թ. հոկտեմբերին Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը Լիցենզային պայմանագիր է կնքել Հայաստանի Հանրապետության Առևտրի ու տնտեսական զարգացման նախարարության և Բնապահպանության նախարարության հետ (Իրավասու մարմիններ): Լիցենզային պայմանագրի համաձայն Իրավասու մարմինները վերջնական մայր կազմակերպությանն են փոխանցել Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի 105 միլիոն տոննա չափով պաշարների (տարեկան 7 մլն տոննա) վերահսկման և շահագործման իրավունքը մինչև 2026թ.: 2008թ. ապրիլի 11-ին վերջնական մայր կազմակերպությունը 70,000 հազար դրամ արժեքով Ընկերությանն է փոխանցել Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերահսկման և շահագործման, ինչպես նաև Լիցենզային պայմանագրով նախատեսված մյուս բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

9. Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով

հազ. դրամ	**2011թ.**	**2010թ.**
Կանխավճարներ հիմնական միջոցների գծով	**11,659,240**	**5,519,989**

Աղացների գնման համար 10,567,560 հազար դրամ գումարով (2010թ-ին՝ 5,505,707 հազար դրամ) կատարած կանխավճարը (տես՝ ծանոթագրություն 17 (ա)) ներառվել է ոչ ընթացիկ ակտիվների գծով կատարած կանխավճարների կազմում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

10. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

(ա) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող արժեքների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կիրառելի են հետևյալ հոդվածների գծով.

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**2011թ.**	**2010թ.**	**2011թ.**	**2010թ.**	**2011թ.**	**2010թ.**
Հիմնական միջոցներ	-	-	(31,267)	-	(31,267)	-
Վարկեր և փոխառություններ	-	-	(3,257,482)	-	(3,257,482)	-
Կանխավճարներ	208,483	-	-	-	208,483	-
Նախորդ ժամանակաշրջաններից փոխանցված հարկային վնասներ	29,001	-	-	-	29,001	-
Հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**237,484**	-	**(3,288,749)**	-	**(3,051,265)**	-

Հարկային վնասները ենթակա են մարման 2014-2015թթ.: Գործող հարկային օրենսդրության համաձայն նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

(բ) Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել հետևյալ հոդվածների գծով.

հազ. դրամ	**2011թ.**	**2010թ.**
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	-	100,631
Հարկային վնասներ	-	14,524
	-	**115,155**

Այս հոդվածների գծով հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել, քանի որ անորոշ է, թե արդյոք առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Ընկերությունը կկարողանա իրացնել այդ հոդվածներից ստացված օգուտը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված հոդվածների գծով ճանաչվել են հետաձգված հարկային ակտիվներ, քանի որ առկա են բավականաչափ հարկվող ժամանակավոր տարբերություններ, որոնք ըստ ակնկալիքների կհակադարձվեն նույն ժամանակաշրջանում, որում սպասվում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումը:

(գ) Ժամանակավար տարբերությունների շարժը տարվա ընթացքում

հազ. դրամ	1 հունվարի 2011թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	31 դեկտեմբերի 2011թ.
Հիմնական միջոցներ	-	(31,267)	-	(31,267)
Վարկեր և փոխառություններ	-	31,267	(3,288,749)	3,257,482
Կանխավճարներ	-	208,483	-	208,483
Նախորդ ժամանակաշրջաններից փոխանցված հարկային վնասներ	-	29,001	-	29,001
	-	**237,484**	**(3,288,749)**	**(3,051,265)**

11. Պաշարներ

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Պահեստամասեր	266,886	125,180
Վառելիք	51,038	22,540
Այլ նյութեր	114,739	167,571
	432,663	**315,291**

12. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ և էմիսիոն եկամուտ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ	Սովորական բաժնետոմսեր	
	2011թ.	2010թ.
Հայտարարված բաժնետոմսեր		
Անվանական արժեք	1,000 դրամ	1,000 դրամ
Թողարկում հունվարի 1-ի դրությամբ	3,100,100	3,100,100
Թողարկում դեկտեմբերի 31-ի դրությամբ, ամբողջովին վճարված	**3,100,100**	**3,100,100**

Սովորական բաժնետոմսեր

Բոլոր բաժնետոմսերը դասվում են հավասարազոր կերպով Ընկերության մնացորդային ակտիվների գծով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը գրավադրված են վարկային գծի դիմաց (ծանոթագրություն 13):

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ տեղական օրենսդրությամբ պահանջվող ՖՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չուներ բաշխման ենթակա պահուստներ (2010թ-ին՝ նման պահուստներ չեն եղել):

13. Վարկեր և փոխառություններ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություն վերջնական մայր կազմակերպությունից	21,313,670	-
	21,313,670	-
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություն վերջնական մայր կազմակերպությունից	255,018	15,918,123
	255,018	**15,918,123**

2011թ. հունիսի 30-ին վերջնական մայր կազմակերպության կողմից տրամադրված գրավով չապահովված կարճաժամկետ փոխառության պայմաններն էականորեն փոփոխվեցին, որի արդյունքում սկզբնական պարտավորության մարումը երկարաձգվեց մինչև 2024թ.: Փոխառության պայմանագրի պայմանների փոփոխությունները հաշվառվեցին որպես սկզբնական կարճաժամկետ ֆինանսական պարտավորության մարում և նոր երկարաժամկետ ֆինանսական պարտավորության ճանաչում:

Հաշվի առնելով այն փաստը, որ երկարաժամկետ փոխառությունը վերջնական մայր կազմակերպության կողմից տրամադրվել է շուկայականից ցածր տոկոսադրույքով, փոխառությունը ճանաչվել է իրական արժեքով՝ կիրառելով նմանատիպ գործիքների համար գնահատված շուկայական տոկոսադրույքը: Շուկայական տոկոսադրույքը գնահատվել է 19%՝ ՀՀ կառավարության երկարաժամկետ արժեթղթերի եկամտաբերությանն ավելացնելով 3% վարկային ռիսկի սպրեդ: Սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և փոխառության անվանական արժեքի միջև տարբերությունը ճանաչվել է որպես լրացուցիչ կապիտալ՝ առանց հաշվի առնելու հետաձգված հարկը:

Վերջնական մայր կազմակերպությունից ստացված երկարաժամկետ փոխառության գծով գնահատված արդյունավետ տոկոսադրույքի փոփոխությունը 100 տոկոսային կետով սկզբնական ճանաչման պահին կավելացներ/(կնվազեցներ) վերջնական մայր կազմակերպությունից ստացված երկարաժամկետ փոխառության հաշվեկշռային արժեքը ստորև ներկայացվող գումարների չափով: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

հազ. դրամ	**100 տկ աճ**	**100 տկ նվազում**
2011թ.		
Գրավով չապահովված փոխառություն վերջնական մայր կազմակերպությունից	(1,002,196)	1,091,227

2011թ. ընթացքում Ընկերությունը 283,300 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով վարկային գծի պայմանագրեր է կնքել “ՎՏԲ Բանկ Արմենիա” ՓԲԸ-ի հետ, որի մարման ժամկետը լրանում է 2023թ. հունիսի 26-ին: Վարկային գծերի համար ապահովություն են ծառայում Ընկերության հիմնական միջոցները (ծանոթագրություն 7) և սովորական բաժնետոմսերի 100%-ը (ծանոթագրություն 12): Վարկային գծերի համար լրացուցիչ ապահովություն (այդ թվում՝ երաշխիքներ) են տրամադրել մայր կազմակերպությունը և վերջնական մայր կազմակերպությունը:

(ա) Վարկերի (փոխառությունների) պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են գործող վարկերի (փոխառությունների) պայմանները:

				31 դեկտեմբերի 2011թ.		31 դեկտեմբերի 2010թ.	
հազ. դրամ	**Արժույթ**	**Անվանակ. տոկոսադր.**	**Մարմա ն տարի**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**
Գրավով չապահովված փոխառություն վերջնական մայր կազմակերպությունից	ՀՀ դրամ	9%	2011թ.	-	-	15,918,123	15,918,123
Գրավով չապահովված փոխառություն վերջնական մայր կազմակերպությունից	ՀՀ դրամ	9%	2024թ.	37,699,765	21,568,688	-	-
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				**37,699,765**	**21,568,688**	**15,918,123**	**15,918,123**

14. Պահուստներ

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Մնացորդը առ 1 հունվարի	33,738	48,286
Տարվա ընթացքում պահուստներին կատարած մասհանումներ	88,792	28,614
Տարվա ընթացքում օգտագործված պահուստներ	(33,107)	(43,162)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**89,423**	**33,738**
Ոչ ընթացիկ	-	-
Ընթացիկ	89,423	33,738
	89,423	**33,738**

Անտառների վերականգնում

2008թ-ին Ընկերությունը համաձայնության է եկել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ և համաձայնեցրել է անտառապատման ծրագիր, որ ը պետք է փոխհատուցի հանքավայրի շահագործման նախապատրաստական աշխատանքների և գործարանի կառուցման նպատակով անտառահատումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասը: Հաշվետու ամսաթվի դրությամբ իր պարտավորությունը գնահատելիս Ընկերությունը դիտարկել է հատված ծառերի ընդհանուր տարածքը, հատված ծառերի մակերեսի և անտառապատման ենթակա՝ համապատասխան ծրագրով սահմանված տարածքների հարաբերակցությունը, աշխատանքների համաձայնեցված ժամկետները և մոտավոր ծախսերը: Անտառապատման ենթակա տարածքի միավորի հաշվով աշխատանքների արժեքը գնահատելիս Ընկերությունը դիտարկել է անտառապատման համար կնքված պայմանագրերի փաստացի գները:

15. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ծառայությունների և ակտիվների ձեռքբերման համար վճարվելիք գումարներ	465,745	157,818
Վճարվելիք աշխատավարձ	93,476	61,055
Այլ վճարվելիք գումարներ	64,350	18,770
	623,571	**237,643**

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի և իրացվելիության ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

16. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- վարկային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին, ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Ընկերության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Դիտորդ խորհուրդը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակներն ու դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանները և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կունենան իրենց դերերի և պարտականությունների մասին:

(բ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականություններն Ընկերության նկատմամբ: Վարկային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից և այլ պայմանագրային կողմերից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի գծով:

(i) Ենթարկվածություն վարկային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

	Հաշվեկշռային արժեք	
հազ. դրամ	**2011թ.**	**2010թ.**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	76,122	45,137
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,165	4,165
	90,287	**49,302**

(ii) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Ֆինանսական ակտիվները, որոնց հետ կապված կարող է առաջանալ վարկային ռիսկ, հիմնականում ներառում են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները: Ընկերությունում կիրառվում են ընթացակարգեր, որոնք ապահովում են, որպեսզի ծառայությունները մատուցվեն համապատասխան վարկային պատմություն ունեցող հաճախորդներին, ինչը պարզվում է իրազեկ կողմերին ուղղված հարցումների միջոցով:

Ընկերությունը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Ընկերության գնահատականը: Այս պահուստի հիմնական տարրը հատուկ վնասն է, որը վերաբերում է անհատական հիմունքով ռիսկի զգալի գործոն պարունակող պարտքերին:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով պահուստային հաշիվները օգտագործվում են արժեզրկումից կորուստները գրանցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը համոզվում է, որ պարտքի վերադարձը հնարավոր չէ: Այդ դեպքերում գումարները գրանցվում են որպես անվերականգնելի և դուրս են գրվում ուղղակիորեն ֆինանսական ակտիվից:

(գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Ընկերության համբավը վտանգի ենթարկելու:

Ընկերությունն ունի հիմնական միջոցներ ձեռք բերելու պայմանագրային պարտավորություններ (ծանոթագրություն 17):

Ընկերության ընթացիկ պարտավորությունների (փոխառությունների) մեծամասնությունը վերաբերում է կապակցված կողմերին, այդ իսկ պատճառով, ղեկավարությունը գտնում է, որ դա Ընկերությանն ապահովում է բավարար ճկունությամբ՝ պարտավորությունների մարման ժամկետների տեսանկյունից, և, արդյունքում, Ընկերությունը չի պահում դրամական միջոցների մնացորդների էական ավելցուկ:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

2011թ. հազ. դրամ	**Հաշվեկշռային գումար**	**Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	21,568,688	79,544,270	816,689	2,808,356	3,370,027	10,110,082	62,439,116
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	623,571	623,571	623,571	-	-	-	-
	22,192,259	**80,167,841**	**1,440,260**	**2,808,356**	**3,370,027**	**10,110,082**	**62,439,116**

2010թ. հազ. դրամ	**Հաշվեկշռային գումար**	**Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	15,918,123	17,334,382	332,547	17,001,835	-	-	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	237,643	237,643	237,643	-	-	-	-
	16,155,766	**17,572,025**	**570,190**	**17,001,835**	-	-	-

2011թ. նոյեմբերի 22-ին Ընկերությունը 283,300 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով երեք վարկային գծի պայմանագրեր է կնքել "ՎՏԲ Բանկ Արմենիա" ՓԲԸ-ի հետ (ծանոթագրություն 13). Վարկային գիծը կտրամադրվի երեք չափաբաժնով: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ստացել որևէ չափաբաժին վարկային գծի նշված պայմանագրերի համաձայն: Վարկային գծի պայմանագրերի շրջանակում ստացված փոխառությունների մարման վերջնաժամկետը 2023թ. հունիսի 26-ն է:

(դ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, ներառյալ փոխարժեքի և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը կապված է հիմնականում ԱՄՆ դոլարով արտահայտված գնումների գծով պարտավորվածությունների հետ (ծանոթագրություն 17(ա)): 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված էական ֆինանսական գործիքներ:

(ii) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով վերջիններիս իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրանց գծով ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող պաշտոնական քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկ կամ փոխառություն վերցնելիս ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Կառուցվածքը

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2011թ.	**2010թ.**
Ֆիքսված դրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	21,568,688	15,918,123

Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված դրույքով գործիքների համար

Ընկերությունը չի հաշվառում շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ վաճառքի համար մատչելի ֆիքսված դրույքով գործիքները: Այս իսկ պատճառով, տոկոսադրույքների փոփոխությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ազդեցություն չի ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

(ե) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և իրական արժեք

Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն

Ստորև ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները՝ հաշվեկշռային արժեքների հետ մեկտեղ:

հազ. Դրամ	**Վարկեր և դեբիտորական պարտքեր**	**Այլ ֆինանսական պարտավորություն**	**Ընդամենը հաշվեկշռային արժեք**	**Իրական արժեք**
31 դեկտեմբերի 2011թ.				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,165	-	14,165	14,165
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	76,122	-	76,122	76,122
	90,287	-	**90,287**	**90,287**
Վարկեր և փոխառություններ	-	21,568,688	21,568,688	21,568,688
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	623,571	623,571	623,571
	-	**22,192,259**	**22,192,259**	**22,192,259**

հազ. Դրամ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Այլ ֆինանսական պարտավորություն	Ընդամենը հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
31 դեկտեմբերի 2010թ.				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,165	-	4,165	4,165
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	45,137	-	45,137	45,137
	49,302	-	**49,302**	**49,302**
Վարկեր և փոխառություններ	-	15,918,123	15,918,123	15,918,123
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	237,643	237,643	237,643
	-	**16,155,766**	**16,155,766**	**16,155,766**

Իրական արժեքի որոշման համար օգտագործված տոկոսադրույքներ

Դրամական միջոցների գնահատված հոսքերի զեղչման համար (կիրառելիության դեպքում) օգտագործված տոկոսադրույքները հիմնվում են հաշվետու ամսաթվի դրությամբ կառավարության արժեթղթերի եկատմաբերության կորի վրա՝ գումարած համապատասխան վարկային սպրեդը: Կիրառված տոկոսադրույքները հետևյալն են.

	2011թ.	2010թ.
Վարկեր և փոխառություններ	19%	9%

(զ) Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարումը կարգավորող ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկային մասնակիցների վստահությունը պահպանելու համար:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: Ընկերության նկատմամբ չեն գործում կապիտալի կառավարմանը վերաբերող արտաքին պահանջներ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության պարտքի և կապիտալի հարաբերակցությունը կազմում էր՝

հազ. դրամ	**2011թ.**	**2010թ.**
Ընդամենը պարտավորություններ	27,021,858	16,305,969
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(14,165)	(4,165)
Զուտ պարտքը	27,007,693	16,301,804
Ընդամենը սեփական կապիտալ	15,985,267	2,897,285
Պարտքի և կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1.7	5.6

17. Կապիտալ պարտավորվածություններ

(ա) Գնումների գծով պարտավորվածություններ

Ընկերությունը պայմանագրեր է կնքել աղացների և հարստացուցիչ տարբեր սարքավորումների գնման համար: Պայմանագրերի ընդհանուր գինը կազմում է համապատասխանաբար 44,849 հազար ԱՄՆ դոլար և 25,928 հազար ԱՄՆ դոլար: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից պայմանագրի գծով կատարած կանխավճարները կազմում են համապատասխանաբար 31,085 հազար ԱՄՆ դոլար (2010թ-ին՝ 16,544 հազար ԱՄՆ դոլար) և 1,720 հազար ԱՄՆ դոլար (2010թ-ին՝ զրո):

(բ) Հանքի շահագործմանը վերաբերող պարտավորվածություններ

Լիցենզային պայմանագրի (տես՝ ծանոթագրություն 8) և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցված բնապահպանական ծրագրերի համաձայն Ընկերությունը պարտավոր է՝

- ավարտել նախապատրաստական աշխատանքները և կատարել 320,000,000 ԱՄՆ դոլար գումարով ներդրումներ Թեղուտի հանքավայրի շահագործման համար մինչև 2014թ. և այնուհետև սկսել հանքի շահագործումը,
- իրականացնել անտառապատման աշխատանքներ հանքավայրի շահագործման համար հատկացված տարածքում հատված ծառերի փոխարեն (տես՝ ծանոթագրություն 14):

18. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Թեև Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում, Ընկերությունը քայլեր է ձեռնարկել հիմնական միջոցների ապահովագրման ուղղությամբ: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի ունեցել ամբողջական ապահովագրություն իր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չի եղել գործունեության ընդհատումից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէր, գոյություն ուներ ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող էր զգալի բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

2012թ. ընթացքում Ընկերությունն ապահովագրել է իր հիմնական միջոցները 282,697,617 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական գործերի, վարույթների և բողոքների կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ ընդհանուր պարտավորությունը, եթե այդպիսին առաջանա նման վարույթների կամ բողոքների արդյունքում, էական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

(գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(դ) Շրջակա միջավայրի պահպանության

Շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը մշակման փուլում է Հայաստանում, և պետական մարմինների իրավասությունները շարունակաբար վերանայվում են: Ընկերությունը պարբերաբար գնահատում է իր պարտականությունները՝ համաձայն բնապահպանության գործող կանոնակարգերի: Պարտականությունները որոշելուց հետո, դրանք անմիաջապես ճանաչվում են: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ գործող կանոնակարգերի, քաղաքացիական գործերի գծով դատական վարույթների կամ օրենսդրության փոփոխության հետևանքով, հնարավոր չէ գնահատել, սակայն դրանք կարող են էական լինել: Ներկային օրենսդրական միջավայրի պայմաններում ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը չունի էական չճանաչված պարտավորություններ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված:

19. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է Կիպրոսում գրանցված "Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթեդ" ընկերությունը: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է Հայաստանի Հանրապետությունում գրանցված "Արմենիան Քափըր Փրոգրամ" ՓԲԸ-ն: Ընկերության վերջնական վերահսկող անձը պրն. Վալերի Մեջլումյանն է: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը ներկայացնում է հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ հիմնական ղեկավար անձնակազմի հետ

(i) Հիմնական ղեկավար անձնակազմի վարձատրություն

Տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	**4,697**	**3,014**

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

(i) Այլ եկամուտ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
Վերջնական մայր կազմակերպություն	4,383	5,011	3,541	4,569
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	74,865	8,659	63,657	83

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

(ii) Գնումներ

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2011թ.	Գործարքի արժեքը 2010թ.	Մնացորդը 2011թ.	Մնացորդը 2010թ.
Հիմնական միջոցների գնումներ				
Վերջնական մայր կազմակերպություն	5,269	53,080	-	3,476
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	36,269	78,503	-	2,023
Նյութերի գնումներ				
Վերջնական մայր կազմակերպություն	24,186	89,217	320	28,096
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	157,668	96,997	42,060	20,714
Ստացված ծառայություններ և գործառնական վարձակալություն				
Վերջնական մայր կազմակերպություն	119,933	104,152	73,755	39,321
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	177,541	452,960	9,732	44,567

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

(iii) Վարկեր (փոխառություններ)

հազ. դրամ	Գումարը 2011թ.	Գումարը 2010թ.	Մնացորդը 2011թ.	Մնացորդը 2010թ.
Ստացված վարկեր (փոխառություններ)				
Վերջնական մայր կազմակերպություն	21,621,827	9,452,020	21,568,688	15,918,123

Վերջնական մայր կազմակերպությունից ստացված փոխառության գծով կիրառվում է տարեկան 9% տոկոսադրույք, փոխառությունը ենթակա է մարման 2024թ-ին: Սկզբնական ճանաչման պահին փոխառությունը զեղչվել է՝ կիրառելով 19% շուկայական տոկոսադրույքը: Անվանական արժեքի և սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի միջև տարբերությունը ճանաչվել է որպես լրացուցիչ կապիտալ՝ առանց հաշվի առնելու հետաձգված հարկը:

հազ. դրամ	Փոխառության գումարը 2011թ.	Փոխառության գումարը 2010թ.
Հաշվեգրված տոկոսներ		
Վերջնական մայր կազմակերպություն	2,407,733	930,282

Մայր կազմակերպությունը և վերջնական մայր կազմակերպությունը երաշխիքներ և այլ ապահովություն են տրամադրել “ՎՏԲ Բանկ Արմենիա” ՓԲԸ-ից ստացված 283,300 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով վարկային գծի համար (ծանոթագրություն 13):

20. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունը ստացել է 87,805 հազար ԱՄՆ դոլար ծանոթագրություն 13-ում նշված վարկային գծից: